ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/29/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **02 ապրիլի 2026թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2026 թվականի ապրիլի 2-ին քննության առնելով «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) վարչության նախագահ՝ Տիգրան Արզաքանցյանի կողմից Կուսակցության 2023 և 2024 թվականների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների հավաստիությունը ստուգելու համար Հանձնաժողովի կողմից պահանջվող փաստաթղթերը և տեղեկատվությունը օրենքով սահմանված ժամկետում չտրամադրելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.14-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/29/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Տ

I.Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ և 28-րդ կետերով սահմանված լիազորությունների շրջանակներում, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք)՝ մինչև 2025 թվականի մարտի 31-ը գործող

խմբագրության 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև 27-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջների պահպանվածության ստուգման արդյունքում հայտնաբերել է, որ Կուսակցության 2023 և 2024 թվականների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվություններում (այսուհետ՝ նաև Տարեկան հաշվետվություններ) առկա են մի շարք անհամապատասխանություններ և ոչ ամբողջական տվյալներ, այդ թվում՝ կուսակցության ղեկավար մարմնի անդամների վերաբերյալ տեղեկության բացակայություն, բանկային քաղվածքներում զրոյական շարժի պայմաններում հաշվետվություններով մուտքերի և ելքերի արտացոլում, անկանխիկ հաշվարկների պահանջների հնարավոր խախտում, ինչպես նաև ՀԼՄ հրապարակումներով լուսաբանված միջոցառումների ֆինանսական ծախսերի չարտացոլում հաշվետվություններում:

1.2 Հանձնաժողովը 2025 թվականի նոյեմբերի 14-ին Կուսակցության վարչության նախագահ Տիգրան Արզաքանցյանին է ուղարկել թիվ 01/4437-2025 գրությունը, որով վերջինս ծանուցվել է, որ Կուսակցությանը տրամադրվել է տասնօրյա ժամկետ՝ տարեկան հաշվետվությունների հավաստիությունը ստուգելու նպատակով Հանձնաժողովի կողմից պահանջվող անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացնելու համար: Ի պատասխան նշված գրության՝ Կուսակցության վարչության նախագահ Տիգրան Արզաքանցյանի կողմից 2025 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ Մ-7443-2025 գրությամբ հայցվել է լրացուցիչ ժամկետ:

1.3 Հանձնաժողովը 2025 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 01/4771-2025 գրությամբ տրամադրել է լրացուցիչ 5-օրյա ժամկետ՝ պահանջվող տեղեկատվությունը ներկայացնելու համար: Սակայն, նշված լրացուցիչ ժամկետի ավարտից հետո ևս պահանջվող տեղեկատվությունը Հանձնաժողով չի ներկայացվել:

1.4 Հանձնաժողովը վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 189.14-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2026 թվականի փետրվարի 10-ին Կուսակցության վարչութայն նախագահ Տիգրան Արզաքանցյանին է ուղարկել թիվ 01/344-2026 գրությունը, որով վերջինիս ծանուցել է, որ անհրաժեշտ է նշված գրությունն ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը 14:00-ին, ներկայանալ Հանձնաժողով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն

կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 14:00-ին՝ գործի քննությանը մասնակցելու նպատակով:

1.5 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծանուցումը պատվիրված նամակով ուղարկվել է Տիգրան Արզաքանցյանին, սակայն ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողովը չի ստացել այն ստանալու մասին հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված կարգով՝ ծանուցումը 2026 թվականի փետրվարի 25-ին տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային (www.azdarar.am) կայքում, որից հետո՝ հինգերորդ օրը՝ 2026 թվականի մարտի 2-ին, ծանուցումը համարվել է հանձնված (ստացված):

1.6 2026 թվականի մարտի 5-ին պատշաճ ծանուցված Տիգրան Արզաքանցյանի բացակայությամբ կազմվել է թիվ 48/26 ՎԻՎ արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.14-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.7 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Տիգրան Արզաքանցյանը չի ներկայացել 2026 թվականի մարտի 9-ին՝ ժամը 14:00-ին նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը: Հանձնաժողովը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ պարզելու անհրաժեշտություն է առկա Կուսակցության վարչության նախագահ Տիգրան Արզաքանցյանից՝ կայացրել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կասեցնելու մասին որոշում: Միաժամանակ գործի քննությունը նշանակվել է 2026 ապրիլի 2-ին՝ ժամը՝ 15:00-ին: Նշված ծանուցումը Տիգրան Արզաքանցյանի կողմից ստացվել է 2026 թվականի մարտի 25-ին (հիմք՝ [redacted] փոստային առաքանի):

1.8 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Տիգրան Արզաքանցյանի բացակայությամբ 2026 թվականի ապրիլի 2-ին՝ ժամը 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի ընթացքում Հանձնաժողովի կողմից պահանջվող տեղեկատվությունը Կուսակցության կողմից ներկայացվել է Հանձնաժողով:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/29/2026 վարչական վարույթում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Տիգրան Արզաքանցյանը 2003 թվականի հունվարի 17-ից հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավար՝ Կուսակցության վարչության նախագահը, ինչով պայմանավորված՝ հանդիսանում է Հանձնաժողովի կողմից պահանջվող փաստաթղթերն ու տեղեկությունները, ինչպես նաև պարզաբանումներ ներկայացնելու, հաշվետվություններում հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու պարտականություն կրող պաշտոնատար անձ:

3.2 Տիգրան Արզաքանցյանը Կուսակցության 2023 և 2024 թվականների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների հավաստիությունը ստուգելու նպատակով պահանջվող անհրաժեշտ տեղեկատվությունը սահմանված ժամկետում չի տրամադրել Հանձնաժողով:

3.4 Մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը Տիգրան Արզաքանցյանի կողմից Հանձնաժողով է ներկայացվել պահանջվող տեղեկատվությունը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի մարտի 31-ը գործող խմբագրության 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.azdarar.am, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հաշվետվությունը:

4.2 Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի մարտի 31-ը գործող խմբագրության 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան հաշվետվություն), իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը:

4.3 Սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների և ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաև ունեցած գույքի մասին՝ նշելով դրա արժեքը:

4.4 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

4.5 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը:

4.6 Օրենքի 40.1-րդ հոդված 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովն ստուգում է կուսակցության ներկայացրած տարեկան հաշվետվության համապատասխանությունը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված պահանջներին:

4.7 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե կուսակցության հաշվետվության ստուգման արդյունքում Հանձնաժողովը պարզում է, որ հաշվետվության մեջ առկա են սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, ապա կուսակցությանը տրամադրում է նվազագույնը 10-օրյա, առավելագույնը՝ 30-օրյա ժամկետ՝ դրանց վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու և տվյալները շտկելու նպատակով:

4.8 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշվետվության հավաստիությունն ստուգելու նպատակով Հանձնաժողովի պահանջի դեպքում կուսակցությունը պարտավոր է հինգ օրվա ընթացքում տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ կուսակցության բանկային մուտքերի և ելքերի վերաբերյալ, ներկայացնել հաշվապահական հաշվառման և ներկայացրած հաշվետվության հավաստիությունն ստուգելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր, ներառյալ՝ բանկային ավանդի, վարկային, գույքի առուվաճառքի, վարձակալության պայմանագրերը:

4.9 Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.10 Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.11 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են պետության անվտանգության ապահովման, կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող

գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.12 Օրենսգրքի 189.14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցության հրապարակած և լիազոր մարմին ներկայացրած հաշվետվության հավաստիությունը ստուգելու համար լիազոր մարմնի պահանջի դեպքում օրենքով սահմանված փաստաթղթերը սահմանված ժամկետում չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

4.13 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.14 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.15 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 189.14-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.16 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը)

կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 189.14-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել Սահմանադրական օրենքով նախատեսված կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ Հանձնաժողովի վերահսկողության պատշաճ իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվությունների լիարժեք ստուգումը՝ այդպիսով նպաստելով նաև կուսակցության ֆինանսական հաշվետվողականության, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության ապահովմանը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը գտնում է, որ թեև Կուսակցության վարչության նախագահ Տիգրան Արզաքանցյանը Կուսակցության 2023 և 2024 թվականների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների հավաստիությունը ստուգելու նպատակով Հանձնաժողովի կողմից պահանջվող փաստաթղթերն ու տեղեկատվությունն օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու արդյունքում թույլ է տվել Օրենսգրքի 189.14-րդ հոդվածով սահմանված

իրավախախտում, այդուհանդերձ նրա կողմից մինչև գործի քննությունը պահանջվող փաստաթղթերը և տեղեկատվությունը Հանձնաժողով ներկայացնելու արդյունքում քննարկվող նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել, հետևաբար վերջինիս կողմից թույլ տրված խախտումն ունի նվազ նշանակություն: Հանձնաժողովը Կուսակցության վարչության նախագահի կողմից թույլ տրված իրավախախտումը նվազ նշանակության գնահատելիս հաշվի է առնում նաև այն, որ Կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների հավաստիությունը ստուգելու նպատակով Հանձնաժողովի կողմից պահանջվող փաստաթղթերն ու տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չի ներկայացվել առաջին անգամ:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Օրենքի մինչև 2025 թվականի մարտի 31-ը գործող խմբագրության 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածի 4-րդ մասով, Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ուժը Հայրենյաց» կուսակցության նախագահ Տիգրան Արզաքանցյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով թիվ ՎԻՎ/29/2026 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն սահմանված կարգով Տիգրան Արզաքանցյանին հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ